Հավելված N 36
Հաստատված է
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գլխավոր քարտուղարի
2020 թվականի սեպտեմբերի 24-ի N 609-Ա հրամանով

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

### 1. Ընդհանուր դրույթներ

**1.1.Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) սպորտի քաղաքականության վարչության (այսուհետ՝ Վարչություն) զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիրը՝ (ծածկագիր՝ 18-34.16-Ղ4-2):

**1.2. Ենթակա և հաշվետու է**

Բաժնի պետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

**1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ**

Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատակիցները:

**1.4.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

**1.5. Աշխատավայրը**

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ.Սարգսյան3, Կառավարական շենք N 2

### 2. Պաշտոնի բնութագիրը

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

1) Ապահովում է օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բնագավառում,
2) Ապահովում է հայեցակարգերի ու պետական նպատակային ծրագրերի մշակման աշխատանքները զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բնագավառում.
3) Ապահովում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և միջնաժամկետ ծախսային ծրագրերի ոլորտային նախագծի մշակումը.
4) Ապահովում է հանրապետությունում բնակչության զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության գործի կազմակերպման աշխատանքների մեթոդական ղեկավարումը.
5) Ապահովում է ֆիզիկական կուլտուրայի և զանգվածային սպորտի ոլորտի քարոզչությունը.
6) Ապահովում է աջակցումը ազգային սպորտային խաղերի տարածմանն ու զարգացմանը, սպորտաժամանցային գործունեության բազմազանության ապահովմանը.
7) Ապահովում է միջազգային միջգերատեսչական պայմանագրերի մշակումը, օրենքով սահմանված կարգով մասնակցությունը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մշակմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարումը բնագավառում.
8) Ապահովում է միջազգային սպորտի համագործակցության նպատակով հաշմանդամություն ունեցող սպորտային խմբերի և անհատ մարզիկների օտարերկրյա պետություններ գործուղմանը, աջակցում է միջազգային սպորտային համագործակցության զարգացմանը.

9) Ապահովում է միջազգային սպորտային կազմակերպությունների աշխատանքները.
10) Ապահովում է հանրապետական զանգվածային մարզական բնույթի ծրագրեր.
11) Ապահովում է այլ գերատեսչությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ սովորողների ֆիզիկական կուլտուրայի, դպրոցական և ուսանողական սպորտի, զանգվածային միջոցառումների, հանգստի ու ազատ ժամանցի ծրագրեր մշակումը.
12) Ապահովում է «ֆիզիկական կուլտուրա» առարկայի, դպրոցական և ուսանողական սպորտի պետական կրթական չափորոշիչների մշակման և դրանց իրականացման աշխատանքները.
13) Ապահովում է դպրոցական և ուսանողական սպորտի, «ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցման որակի և արդյունավետության մոնիտորինգ,
14) Ապահովում է գիտաժողովների, համաժողովների, սեմինարների (այդ թվում՝ միջազգային) և այլ միջոցառումների կազմակերպման ծրագրերի մշակումը.
15) Ապահովում է վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) վարման համակարգի ստեղծումն ու ներդնումը,
16) Ապահովում է քաղաքացիների՝ զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ նամակների (առաջարկություններ, դիմումներ, բողոքներ) քննարկումը, նպաստում դրանցում արծարծված հարցերի լուծմանը.
17) Ապահովում է բնագավառում վարվող քաղաքականության վերլուծությունը, քաղաքականության միտումների և օրինաչափությունների ուսումնասիրումը, քաղաքականության ռազմավարության, հայեցակարգերի ու նպատակային ծրագրերի մշակումը և դրանց մոնիթորինգը:

**Իրավունքները՝**

- Հրավիրել մասնագիտական քննարկումներ՝ ընդգրկելով համապատասխան մարմինների և/կամ ստորաբաժանումների մասնագետներին, ձևավավորել աշխատանքային խմբեր, հանդես գալ օրենսդրական, հայեցակարգային, ծրագրային և այլ բնույթի նախաձեռնություններով ու առաջարկություններով.
- Բաժնի առջև դրված խնդիրների իրականացման նպատակով պահանջել տեղեկատվական և վիճակագրական տվյալներ մարզական կազմակերպություններից.
- զանգվածային սպորտի աշխատանքների վիճակագրական հաշվառման վարում.
- համապատասխան շահագրգիռ մարմիններից ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ զանգվածային սպորտի և ֆիզիկական կուլտուրայի հիմնախնդիրների ու դրանց լուծման վերաբերյալ.
- ՏԻՄ համապատասխան ստորաբաժանումներից զանգվածային սպորտի բնագավառի վերաբերյալ պահանջել ՀՀ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ տեղեկատվություն.
- ռազմավարական ծրագրերի, հայեցակարգերի մշակման համար պահանջված անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա տեղեկատվության հավաքագրման աշխատանքների կազմակերպում.
- ֆիզիկական դաստիարակության ոլորտի համակարգային վերլուծությունների և արդյունքների գնահատման աշխատանքների կազմակերպում.
- տպագիր և էլեկտրոնային զանգվածային լրատվական միջոցներով, ինչպես նաև գովազդային վահանակների, ցուցապաստառների, տեսահոլովակների միջոցով հանրության իրազեկվածության ուղղությամբ տարվող աշխատանքներ.
- Բաժնի առջև դրված խնդիրների իրականացման նպատակով ՀՀ միջազգային պարտավորությունների վերաբերյալ տվյալների պարբերաբար հավաքագրման աշխատանքներ.
- բաժնի գործառույթներից բխող միջազգային (սահմանված կարգով նաև սփյուռքի) սպորտային կազմակերպությունների հետ համագործակցության աշխատանքներ.
- Բաժնի լիազորությունների շրջանակներում կազմակերպել առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի և գրությունների նախապատրաստման աշխատանքները.

- ներկայացնել առաջարկություններ՝ ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու, դրանց օգտակարության, առողջ կենսակերպի գաղափարի արմատավորման, տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատության վերաբերյալ.
- ներկայացնել ֆիզիկական կուլտուրայի բնագավառում պետական կրթական չափորոշիչների մշակման և կատարելագործման վերաբերյալ հանձնարարականների և ցուցումների առաջարկություններ:

**Պարտականությունները՝**

- Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի՝ նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստում, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակում,
- ընդհանրացնում է իրավական ակտերի գործնական կիրառումն ու ներկայացնում առաջարկություններ զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բնագավառում ՀՀ օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.
- համապատասխան ռեգիստրների միջոցով վարում է զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բնագավառում վարչական վիճակագրությունը, հաշվառում ադապտիվ մարզական կազմակերպությունները.
- ուսումնասիրում և վերլուծում է ոլորտի զարգացման հեռանկարային միտումները, կազմակերպում քաղաքականության իրականացման հայեցակարգային և ռազմավարական մոտեցումները.
- բաժնի իրավասության սահմաններում քննարկվող հարցերի վերաբերյալ, ըստ անհրաժեշտության, հրավիրում է խորհրդակցություններ և մասնագիտական քննարկումներ.
- նախատեսված ժամկետներում ներկայացնում է Բաժնի ընթացիկ և տարեկան գործունեության հաշվետվությունը.
- զանգվածային սպորտի բնագավառում իրականացվող պետական նպատակային ծրագրերի, մարզական զանգվածային միջոցառումների մասին տեղեկատվության լուսաբանումը տարատեսակ լրատվական միջոցներով.
- վարչության պետին է ներկայացնում իրականացրած ռազմավարական ծրագրերի, հայեցակարգերի մշակման համար ներկայացված փաստաթղթերի, տեղեկատվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքները.
- Ուսումնասիրում, վերլուծում և ամփոփում է հաշմանդամային սպորտով զբաղվող հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված փաստաթղթերի, հաշվետվությունների, հայտերը.
- զանգվածային սպորտի և ֆիզիկական դատիարակության բնագավառներում օրենքով սահմանված կարգով ՀՀ միջազգային պարտավորությունների վերաբերյալ տվյալների ուսումնասիրում և վերլուծություն.
- միջազգային (սահմանված կարգով նաև սփյուռքի) սպորտային կազմակերպությունների հետ աշխատանքներին մասնակցության և համագործակցության ծրագրերի կազմում համակարգում, և վերահսում.
- կյանքի առողջ, բարենպաստ պայմանների ապահովման, հիվանդությունների նվազեցման և կանխարգելման, ինչպես նաև ժամանցի, ակտիվ հանգստի կազմակերպմանն աջակցում.
- զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բնագավառների նպատակային ծրագրերին համապատասխան տեղեկատվական, գիտահանրամատչելի, գիտամեթոդական, ուսումնական, գիտական, վերլուծական և այլ բնույթի նյութերի վերլուծություն և հրապարակում.
- գիտաժողովների, համաժողովների, սեմինարների (այդ թվում՝ միջազգային) և այլ միջոցառումների իրականացում.
- Բաժնի առջև դրված գործառույթներից բխող բնակչության իրազեկվածությանն ուղղված աշխատանքների կատարում.

- կրթական չափորոշիչների մշակում և կատարելագործում.
- ըստ անհրաժեշտության ներկայացնում է համապատասխան զեկուցումներ՝ իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում կատարվող աշխատանքների վիճակի մասին:

**3. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

**3.1.Կրթություն, որակավորման աստիճանը**
Բարձրագույն կրթություն
**3.2. Մասնագիտական գիտելիքները**
Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:
**3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը**
Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ սպորտի կամ ֆիզիկական կուլտուրայի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ.
**3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

**Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Կոնֆլիկտների կառավարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

**4.Կազմակերպական շրջանակ**

**4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**
Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:
**4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**
Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:
**4.3. Գործունեության ազդեցությունը**
Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:
**4.4. Շփումները և ներկայացուցչությունը**
Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:
**4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**
Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: